Մամուլի հաղորդագրություն. սեպտեմբեր 23, 2018թ.

23.09.2018

2018թ. սեպտեմբերի 23-ի Երևանի ավագանու ընտրությունները Հայաստանում երկու տասնյակ տարիների ընթացքում կազմակերպվող առաջին ընտրություններն են, որ տեղի են ունենում ազատ և մրցակցային պայմաններում, որտեղ կարևոր է յուրաքանչյուր քաղաքացու ձայնը և ընտրությունների արդյունքներն ի սկզբանե հայտնի չեն:

Այս ընտրություններում «Ականատես» դիտորդական առաքելության մոտ 160 դիտորդներ հսկում են ընտրական գործընթացը 80 ընտրատեղամասերում՝ Երևանի բոլոր վարչական շրջաններում:

«Ականատեսի» դիտորդները քվեարկության նախապատրաստման փուլում արձանագրել են հետևյալը (խախտումների մի մասը ստուգման փուլում է).

Դիտորդների՝ տեղամաս մուտք գործելու հետ կապված որևէ խնդիր չի արձանագրվել՝ մեկ բացառությամբ: Բացահայտվել է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում 7/10 և 7/11 տեղամասերի համար տեղադրված է սխալ հասցե՝ 84-րդ մանկապարտեզի հասցեն Հովնաթանի 23-ի փոխարեն ներկայացված է Շերամի 15, ինչի պատճառով դիտորդները երկու ժամ շարունակ չեն կարողացել գտնել տեղամասը:

Դիտարկված բոլոր տեղամասերում հանձնաժողովների առավոտյան նիստին եղել է քվորում: Չհրկիզվող պահարանի, քվեատուփի վիճակի կամ տեղադրման և տեխնիկական սարքի ստուգման հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել: Քարոզչական նյութերի հետ կապված մեկ դիտարկված խնդիրը տեղում լուծվել է:

Թվով 2 (3%) տեղամասում եղել են վիճակահանության կարգի խախտումներ:

Թվով 1 (1%) տեղամասում զրոյական մասնակցության տեղեկանքը չի տպվել:

Թվով 3 (4%) տեղամասում ներկա են եղել կողմնակի անձինք՝ պահակ, հանձնաժողովի անդամի մայր և կողմնակի քաղաքացի, որոնք զգուշացվելուց հետո տվյալ փուլում դուրս են եկել:

Ընտրողների և կուսակցությունների ցուցակները փակցնելու հետ կապված խնդիրներ չեն եղել:

Թվով 47 (59%) տեղամաս հասանելի չի եղել սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող անձանց համար:

Թվով 14 (18%) տեղամասում սենյակի կահավորումը չի ապահովել քվեարկության գաղտնիությունը:

Երկու դեպքում արձանագրվել է տեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց իրավունքների խոչընդոտում:

Թվով 2 (3%) տեղամաս 5-15 րոպե ուշ են բացվել քվեարկության համար:

Մի շարք խախտումների մանրամասն նկարագրությունը ներկայացված է ստորև.

Մասնավորապես՝ «Ականատես»-ի դիտորդների կողմից նկարագրվել են հետևյալ խնդիրները.

Կահավորման հետ կապված խնդիրներ

2/16 տեղամասում քվեարկության խցիկի մի կողմում գտնվում է պոլիէթիլենային ծածկ, որի հետևից հնարավոր է տեսնել, թե ինչպես է ընտրողը քվեարկում: Այս մասին դիտորդը տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին և վերջինս և այլ անդամներ վստահեցրել են, որ ոչ

ոք չի գալու և այնտեղից հսկի ընտրողների քվեարկությունը: Դիտորդի պնդմամբ, այս խախտումը գրանցվել է գրանցամատյանում, քվեախցիկի տեղը մնացել է անփոփոխ:

2/28 տեղամասում քվեախցերի հետևում կա դուռ, որն ըստ հանձնաժողովի նախագահի փակ է: Հանձնաժողովի անդամները ստորագրել են դատարկ թղթի վրա և այն փակցրել են դռան վրա: Ըստ դիտորդի՝ հանձնաժողովի բոլոր անդամները տեղյակ են այդ դռան գոյության մասին:

2/40 տեղամասում քվեախցիկի ետնամասում առկա է դուռ: Դիտորդը ներկայացրել է խնդիրը հանձնաժողովին, դուռը կպչուն ժապավենով փակել են՝ փորձելով չեզոքացնել դռան առկայությունից ծագող հնարավոր ռիսկը:

4/28 տեղամասում քվեախցիկի ետնամասում առկա է դուռ, իսկ դրա վերևում բաց լուսամուտ: Նախագահի պնդմամբ դուռը փակ է և այդ փաստը ստուգվել է քվեարկությունից մեկ օր առաջ: Քվեախցիկը չի տեղափոխվել, սակայն հանձնաժողովի անդամները թղթերով և կպչուն ժապավենով փակել են լուսամուտը: Այդ մասին արձանագրվել է գրանցամատյանում:

5/10 տեղամասում քվեախցիկներից մեկի հետևում առկա է եղել դուռ, որի վրա եղել է բանալի: Դիտորդը խնդրել է տեղափոխել քվեախցիկը, և վերջինիս խնդրանքին ի պատասխան հանձնաժողովի նախագահը սկզբում հրաժարվել է տեղափոխել քվեախցիկը, այնուհետև, երբ դիտորդը պահանջել է արձանագրել գրանցամատյանում խախտման վերաբերյալ իր գնահատականը, վերջինս համաձայնել է և քվեախցիկը տեղափոխվել է: Ավելի ուշ, Տարածքային ընտրական հանձնաժողովից այցելել են տեղամաս և պահանջել նույն տեղում դնել քվեախցիկը, իսկ ետնամասում գտնվող դռան վրա փակցվել է թուղթ՝ դիտորդի ստորագրությամբ:

9/48 տեղամասում քվեախցիկների ետևի մասում աստիճաններ են ու առկա է դուռ (երեք քվեախցիկներից միայն մեկի ետևում տեղադրվել է գրատախտակ): Հանձնաժողովը պարզաբանել է, որ նախորդ օրը տարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները ներկա են եղել տեղամասում և արձանագրել, որ այլ կերպ տեղամասը կահավորել հնարավոր չէ, հետևաբար, քվեախցիկները չեն տեղափոխվելու: Հանձնաժողովի նախագահին ներկայացվել է պահանջ խնդրի վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու վերաբերյալ, ու թեև հանձնաժողովի նախագահը չի առարկել, հանձնաժողովի քարտուղարը հրաժարվել է կատարել գրանցումը:

Վիճակահանության հետ կապված խնդիրներ

2/22 տեղամասում հանձնաժողովի որոշ անդամներ ինքնակամ փոխել են վիճակահանությամբ իրենց բաժին հասած գործառույթները: Ընդ որում՝ գրանցել են և պահպանել են արդեն փոփոխված տարբերակները: Դիտորդի պահանջով միջադեպն արձանագրվել է տեղամասի գրանցամատյանում:

7/34 տեղամասում խախտվել է վիճակահանության կարգը: Վիճակահանության ժամանակ հանձնաժողովի անդամ Արամ Օհանյանին վեց անգամ բաշխվել է նույն՝ ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնելու և քվեատուփի համար պատասխանատու լինելու գործառույթը, սակայն վերջինս հրաժարվել է վեց անգամ նույն գործառույթը կատարելուց: Հանձնաժողովի նախագահն այդ մասին հայտնել է վերադաս տարածքային ընտրական հանձնաժողովին, և որոշվել է կրկին իրականացնել վիճակահանություն: Դիտորդը պահանջել է գրանցել խախտումը գրանցամատյանում, սակայն Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է:

8/15 տեղամասի բացումից հետո մոտ 30 հատ ծրարի վրա հանձնաժողովի անդամի կողմից դրվել է կնիք: Դիտորդը պահանջել է խախտման վերաբերյալ իր կարծիքը գրանցել գրանցամատյանում, սկզբից հրաժարվել են գրանցել՝ պատճառաբանելով, որ այդ հարցը կդնեն քվեարկության և հանձնաժողովը որոշում կկայացնի վավեր կամ անվավեր ճանաչելու

վերաբերյալ: Դիտորդի պնդումներից հետո գնահատականն ի վերջո գրանցվել է գրանցամատյանում:

Ականատես դիտորդական առաքելության հետ կապված հարցերով և լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Հայկ Դավթյանին 093025271 հեռախոսահամարով:

0-ական մասնակցության վերաբերյալ տեղեկանքի հետ կապված խնդիրներ

8/9 տեղամասում տեխնիկական սարքը ժամանակին չի տպել զրոյական տեղեկանքը, ինչի պատճառով տեղամասը բացվել է 08:10 րոպեին: Հանձնաժողովը կազմվել է արձանագրություն, գրանցամատյանում կատարվել է համապատասխան գրառում, որից հետո տեղամասը բացվել է:

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնադրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ-ի և «Ռեստարտ» քաղաքացիական նախաձեռնության կողմից: Երևանի ավագանու ընտրություններին «Ականատես» դիտորդական առաքելության գործընկերն է նաև Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը: